# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/9 (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ուղեգորգերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 23.05.2016թ. N 1/26-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 01.06.2016թ. ժամը 16-00-ին, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ.Սարդարյանը, Ա.Մկրդումյանը, Վ.Մկրտչյանը, Շ.Հայրապետյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**

***Հայտերի բացման և գնահատման մասին***

**1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/9 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Արմեն-Կարպետ» ԲԲԸ-ն (ք. Երևան, Բաբաջանյան 1, բն. 15)
-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/9 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 01.06.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

«Արմեն-Կարպետ» ԲԲԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

-«Արմեն-Կարպետ» ԲԲԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| | | «Արմեն-Կարպետ» ԲԲԸ | |
| 1 | Ուղեգորգ | 4230000 | 5076000 |

**5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

## 6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Արմեն-Կարպետ» ԲԲԸ -ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «Արմեն-Կարպետ» ԲԲԸ-ին 1-ին չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
4. Ոչ ավտոմատ եղանակով ծանուցել հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Արմեն-Կարպետ» ԲԲԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Մ.Սարդարյան

Ա.Մկրդումյան

Վ.Մկրտչյան

Շ.Հայրապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան